

# ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## Ավան-Հոփսիմե եկեղեցու օրինակը

Գիտե՞ք՝ որտեղ է եղել Արծրունիների տոհմական դամբարանը. Զորադիրի Սուրբ Էջմիածին եկեղեցում: Իսկ գիտե՞ք, որ Թուրքիայի՝ տուրիստական երթուղիներից հեռու և երկար ժամանակ քուրդ զինյալների ու կառավարական զորքերի բախումների կիզակետում գտնվող մի շարք շրջաններում թաքուն գոյատևում են մի շարք հայկական եկեղեցիներ, որոնք փակ են այցելությունների համար: Այս և շատ այլ հարցերի անդրադարձավ Հայաստանի ազգային գրադարանի Արվեստի գրականության և ոչ գրքային հրատարակությունների բաժնի վարիչ Աննա Օնանյանը՝ բաժնի ամենշաբաթյա զեկուցումների շարքի հերթական դասախոսության ժամանակ՝ Ավան-Հոփսիմե եկեղեցու օրինակով ներկայացնելով հայկական եկեղեցիների հիմնական տեսակները, դրանց առանձնահատկություններն ու պատմական նշանակությունը:



«Թուրքիայի տարածքում մինչ այժմ այցելությունների համար փակ համարվող հայտնի հայկական եկեղեցիներից է Վասպուրականի Աղբակի գավառի Զորադիրի (Սորադիր) Սուրբ Էջմիածին եկեղեցին, որի կառուցումը վերագրվում է 7-րդ դարին: Այս հոփսիմեատիպ եկեղեցին Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցու նախատիպն է», - նշեց Աննա Օնանյանը:

Արվեստի գրականության և ոչ գրքային հրատարակությունների բաժնի՝ արվեստի տարբեր ճյուղերին վերաբերող ամենշաբաթյա զեկուցումների շարքի նոր թեման Հայաստանի միջնադարյան եկեղեցիների ճարտարապետությունն է և դրանց շուրջ հյուսված ավանդազրույցները: